



## ՀՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

(1887-1961)

**Աշխարհահռչակ հայ արևելագետ, հնագետ և հասարակական գործիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս**

Հովսեփ Օրբելին ծնվել է 1887թ. մարտի 20-ին Քութայիսի քաղաքում: Ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի երրորդ արական գիմնազիան, 1911թ.-ին՝ Սանկտ Պետերբուրգի Կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը՝ զուգահեռ հաճախելով նաև արևելագիտության ֆակուլտետի հայերեն-վրացերեն-պարսկերեն բաժնի դասընթացներին: Նա դեռևս ուսանողական տարիներից զբաղվել է գիտական գործունեությամբ, Բրուկհաուզի և Եֆրոնի նոր հանրագիտական բառարանի համար գրել է հոդվածներ արվեստի մասին: Հ. Օրբելին 1906-1917թթ.-ին Ն. Մառի ղեկավարությամբ մասնակցել է Անիի պեղումներին և այլ հնագիտական արշավախմբերի: 1909թ.-ին ուսումնասիրել է Լեոնային Ղարաբաղի հայկական արձանագրությունները: 1916թ.-ին Վանում Ն. Մառի հետ պեղումներ կատարելով՝ հայտնաբերել է Ուրարտուի թագավոր Սարգուրի Բ-ի մեծածավալ սեպածն արձանագրությունը: Նրա գրչին է պատկանում «Ախթամար» հիմնարար աշխատությունը, Արևմտյան Հայաստանի միջնադարյան պատմական հուշարձանների ուսումնասիրությունը: Հայ բանահյուսության մեջ նրա անվան հետ է կապված Փավստոս Բյուզանդի, Շապուհ Բագրատունու, Անանիա Շիրակացու գործերի ուսումնասիրությունը, Եղիշեի և Փարպեցու գործերի թարգմանությունները, ինչպես նաև «Միջնադարյան Հայաստանի առակները»:

1920-1951թթ. Օրբելին աշխատել է Պետական Էրմիտաժում՝ սկզբում որպես ֆոնդապահ, այնուհետև՝ Արևելքի բաժնի հիմնադիր և վարիչ, իսկ 1934թ.-ից՝ Էրմիտաժի տնօրեն: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին անձամբ ղեկավարել է Էրմիտաժի գանձերի տարահանման, իսկ պատերազմից հետո դրանց հետտեղափոխման աշխատանքները: Նա աշխատանքից ազատ ժամերին, թշնամու արկերի ու մրհակոծությունների տակ, ռազմաճակատի առաջին գծում, անգամ՝ բլինդաժներում դասախոսություններ էր կարդում խորհրդային զինվորների համար: Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Օրբելին հանդես է եկել որպես վկա:

Լենինգրադի բլոկադայի ճեղքումից հետո, 1942թ. Օրբելին եկավ Հայաստան: 1943թ. նոյեմբերի 29-ին, չնայած երկրում մոլեգնող պատերազմին, բացվեց Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիան, և Հովսեփ Օրբելին միաձայն ընտրվեց ակադեմիայի առաջին պրեզիդենտ: Նա միաժամանակ ղեկավարում էր ակադեմիայի պատմության ինստիտուտը: Դեռևս Լենինգրադում աշխատելու տարիներին նա առանձնակի հոգատարություն ուներ հայ ուսանողների ու ասպիրանտների նկատմամբ և փաստորեն կրթեց մի ամբողջ սերունդ: Օրբելու հոգատարությունը հայ ուսանողների հանդեպ ահավոր մեծ պահանջկոտությունն էր, անողորմ քննադատությունն ու հայրական վերաբերմունքը:

Օրբելին եղել է անսովոր վառ անհատականություն, անկրկնելի հոետոր, իր գործին նվիրված հանճարեղ գիտնական: Կես դարից ավելի նա ծառայել է գիտությանը, 1956թ.-ին հիմնել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքը և մինչև կյանքի վերջ ղեկավարել այն: Հ. Օրբելին 1944թ.-ին ընտրվել է Լոնդոնի հնագիտական ընկերության պատվավոր անդամ, 1935թ.-ին՝ Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, 1945թ.-ին՝ Իրանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Նա պարգևատրվել է Լենինի 2 և Աշխատանքային կարմիր դրոշի 2 շքանշաններով: